բելի գինեքով, մանր մուներ ապրանք է ծախում:

Ուղտերը մինչ պիտի յիշեն, տակառի կաթարին ցցուած, լեզուն դուրս հանած, երեքդ ալ դլուխը: Տարօրինակ, մի տեսակ դունդ, որի վրայ հազուագիւտ մազեր էին լողում քըրտինքի մէջ: Հատ կոպեր ու տակը անյագ բիբերի անհանդիստ չարժուելը:

Պատմական այդ գլուխը կարաւանների համար կայարան էր: Հանգստութեան տեղ, ուր կարելի էր մի վայրկեան ծխել, սեխ ուտել, երկու խօսք ասել: Ու ուղտատարները հաչւում էին՝ այդքան ժամ մինչեւ գլուխը եւ այդքան ժամ գլխից յետոյ:

Տարիների ընթացքին, Մարկոսի մարմինը ջուրի մէջ սկսեց ուռիլ, մխերը թուլցան, ստամոքսը վեց մատ վայր իջաւ եւ կաշին վրայ լպրծուն բաներ երեւացին:

Մարկոսը իջաւ քաղաք եւ փոխադրութեան դրամներակ բաց արաւ: Փղոսկր, կաշի, թանդարժէք փայտեղէն, համեմներ, հոտաւէտ բոյսեր: Ուրիշի ապրանք էր ղրկում: Երբեմն տեղ էր հասնում, երբեմն էլ, իրը թէ, աւազակներ էին յարձակւում: Գործեր: Առնել, ծախել, նամակ գրել, նամակ ստանալ:

Մարկոսը տակառի տեղ, բանիոյլի մէջ էր պառկում ու Հաբեչստանի միամիտ քաղաքացիներին խելք սորվեցնում:

Հարստացաւ: Եթէ չհարստացաւ էլ, գործի մարդ դարձաւ: Առնել, ծախել, նամակ ըստանալ, նամակ գրել:

«Սա խեղճ երկրի արդիւնաբերութիւնը քիչ մըն ալ բարձրացնենք»:

Դոլարը բարձրացաւ: Պատերազմ էր:

Նոր երազներ: Կարելիութիւններ:

Կիլիկիան:

* * *

Մարկոս այլեւս աղա եւ Հաբեչստանի մեծ վաճառական, հազիւ պատերազմը վերջացած, Լիոնի կայարանից իջաւ եւ դրպանի մէջ ոսկիներ չարժեց:

Փաշաներ, խաներ, մեծապատիւ ազգային գործիչներ, «ազգային մեծ բանաստեղծներ», ազգին պատիւ բերող, Հաբեչստանի այս վաճառականի առջեւ սողացին:

Մեծ խելք, հայրենասիրական անկեղծ զգացում, քաղաքական կարողութիւն՝ Մարկոս աղան՝ ամէն ինչ ունէր: Ձեռքը դիւրին կերպով գրպանն էր տանում: Պատիւներ: Վերջապէս, եկաւ, վերջապէս եկա՛ւ...

Մարկոս աղան հերոս էր:

Առաջնակարգ պանդոկի մէջ մեծ սենեակ էր վարձել: Հայելիներ, քարտէաններ: Սեղանին վրայ պատուիրակութեան տեղեկութիւնները: Թուանշաններ:

Աղան զգացումով տարուող մարդ չէր: «Ալ չլանք: Մեռնողները մեռան՝ դո՛րծ տեսնենք: Սին երազներ չընենք, նախ մի տեսնենք սա կիլիկիոյ մէջ օձախ մը կրնա՞նք վերցնել»:

Նոր Հաբեչստան էր փնտռում: Տարին երեք անգամ բամբակի ցանքս: Հանքեր: Թուղ՝ սապէս: Ահագին կարելիութիւններ...

Փաշաները լսում էին եւ իրենց գլուխը համակրանքով թօթափում:

«Ազգային մեծ բանաստեղծը» չորս ոտքի վրայ էր ման գալիս:

Թերթերի մէջ, Մարկոս աղան նախաղահութիւնների մէջ վաւում էր:

Մատը բարձրացնում էր, քիթը անկում վեր, փորը առաջ, նայում հայելիի մէջ եւ, նոր Մովսէս, ճառում էր:

Իսկ հայ ժողովուրդը, օտար երկրների մէջ, ուրիշի դռներն էր բախում...

Պատմում է:

«Տեսայ, որ մեր այս համբաւաւոր դրամականագէտները դրել չգիտեն: Օր մը, փաշան նստած էր սա կողմս, խանը սա միւս կողմս: Որոշեցինք ազգին կոչ մը ուղղել եւ դրելը յանձնեցինք սա տխմար մեր «մեծ բանաստեղծին»: Ձրի ռոճիկ կը ստանայ, ըսինք, թող բան մը ընէ: Մէջէն չելաւ: Նախադահութիւններ, նախադահութիւններ... Տանք ըսինք, սա ծերունի վիպասանին, թո՛ղ բան մը վաստկի, խեղճ է: Ան՝ անկից աւանակ: Սանկ, ձեռքէ ձեռք անցաւ, առանց արդիւնքի: Թուղթը առի ձեռքս, հալա սա մարդկանց դաս մը տամ ըսի եւ դրեցի: Հը՛, ըսաւ փաշան, հը՛, ըսաւ խանը, սա՛ էր որ կ'ուզէինք, մա՛շալա Մարկոս աղա»...

Եւ այն օրուանէից ի վեր, Մարկոս աղան իր այցետոմսի տակը աւելացրեց «Հրապարակագիր»:

* * *

Կիլիկիոյ բամբակը այրուեց: Թուղերը

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան